ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Անուն Ազգանուն**

   Լենա Նանուշյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

   Դանիայի Թագավորություն, Կոպենհագեն, 2023թ.

4. **Հրավիրող կողմը**

   Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

5. **Գործուղման նպատակը**

   «Բարեկեցության տնտեսության համատեքստում առողջության վերաբերյալ լուծումների որոնում» համաժողովին

6. **Քննարկված թեմաները**

   Նիստի ընթացքում քննարկվել են աճող տնտեսական ճգնաժամի և շարունակվող COVID-19 համաճարակի հետևանքները: Բարեկեցության ընդհանուր անկումը և առողջապահական ծառայությունների աճող անհասանելիությունը լուրջ վտանգ են ներկայացնում հանրային առողջության և առողջապահական և սոցիալական պաշտպանության համակարգերի ֆինանսական կայունության և ճկունության համար:

   Բարեկեցության տնտեսության հայեցակարգը նոր հնարավորություններ է բացում այս ռազմավարական մարտահրավերներին դիմակայելու համար՝ հանրային քաղաքականության, ներդրումների և ծառայությունների մատուցման նորարարական մոդելների հարմարեցման միջոցով: Համաժողովի նպատակն է մեկ հարթակում հավաքել եվրոպական տարածաշրջանի երկրներում առողջապահության, ֆինանսների և էկոնոմիկայի ոլորտներում

քաղաքականություն մնշակողների՝ բացահայտելու այն մոտեցումները, որոնց միջոցով հնարավոր է լավագույնս աջակցել առողջապահական մարմինների՝ բարեկեցիկ տնտեսությանն անցում կատարելու ջանքերին:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Համաժողովի ընթացքում Լենա Նանուշյանը մասնակցել է «Բարեկեցության տնտեսություններին անցնելու քաղաքական հրամայականները. ինչու և ինչպես են երկրները ձևավորում տնտեսությունը՝ բոլորի համար առողջ, դիմացկուն և բարգավաճ հասարակություններ ապահովելու համար» խորագրով պանելային քննարկմանը, որի ընթացքում անդրադարձել է Հայաստանում՝ մարդկային կապիտալի ներդրումների իրականացմանը, առողջության համապարփակ ապահովագրության ներդրման կարևորությանը՝ որպես հիմնական գործիքներ, որոնք ապահովելու են պետության հանդեպ վստահության բարձրացումը և անվտանգ միջավայրի ստեղծումը:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Համաժողովի արդյունքում մասնակից երկրները համաձայնել են առավել մեծ շեշտադրում իրականացնել առողջության վրա իրականացվող ներդրումների վրա, որոնց արդյունքում կմեծանա առողջապահական համակարգերի՝ արտակարգ իրավիճակներին դիմակայության ունակությունը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

7 մարտի, 2023թ.

Recoverable Signature

X

ԼԵՆԱ ՆԱՆՈՒՇՅԱՆ

Signed by: NANUSHYAN LENA 5114750164